



**«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

*Հետազոտության թեմա՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ*

*Առարկա՝ անզլերեն*

*Հետազոտող ուսուցիչ՝ Բագրատյան Կարմեն*

*Ուսումնական հաստատություն՝ Դ. Սարապյանի անվ. հ. 100 հիմնական դպրոց*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----- 3

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ .ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ----- 5

Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ----- 5

Բ. ԸՆՏԱՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ ----- 7

Գ.ԸՆՏԱՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ----- 9

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ.ԿՈՆՖԼԻԿՏ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ----- 11

Ա. ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ----- 19

Բ.ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ -----  
----- 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----- 24

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----- 26

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Ընտանիքը, լինելով ազգի կարևորագույն օրգաններից մեկը, նախասահմանված է սերնդագործմամբ ազգի ժառանգական հաջորդականությունն ապահովելու և իր ներսում նորահաս սերնդի ազգային սկզբնական դաստիարակությունն իրականացնելու: Ընտանիքում կոնֆլիկտների հաղթահարման տարբեր միջոցներին անդրադառնալը խիստ անհրաժեշտ ու արդիական են:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հետազոտության նպատակն է տալ ժամանակակից ընտանիքի հոգեբանական բնութագիր, նաև անդրադառնալ կոնֆլիկտի հիմնական ձևերին և զարգացման փուլերին, բանակցություններին՝ արտակարգ իրավիճակներում, և դրանց վարման հոգեբանական առանձնահատկություններին: Մեր առաջ դրված խնդիրներն են՝ փորձելորքան հնարավոր է ամբողջությամբ տալ կոնֆլիկտ հասկացության բնութագիրը, գնահատել կոնֆլիկտային իրավիճակը կառավարելու հմտությունները, ժամանակին պարզել կոնֆլիկտի առաջացման պատճառները, մակարդակը, օժանդակել կառուցողական կոնֆլիկտների ձևավորմանը, հետևել դրանց զարգացման ընթացքին, կանխել կազմակերպության համար կործանարար և վնասաբեր կոնֆլիկտների զարգացումը՝ դրանց լուծման համար կիրառելով իրավիճակին առավել համապատասխան եղանակը:

Քանի որ կոնֆլիկտը ծագում է այն ժամանակ, երբ կողմերի հետաքրքրությունները, գաղափարները տարամիտվում են այն իմաստով, որ երկուսն էլ ժամանակին չեն կարող հասնել իրենց նպատակներին, բնութագրվում է սուբյեկտի համար անձնային ոլորտում հուզական ապրումների փոփոխություններով, ուստի նաև անդրադարձել ենք բանակցություններին, թե ինչպես կարելի է օպտիմալ ձևով հաղթահարել կոնֆլիկտը՝ հասնելով որոշակի չափով հաղթանակի:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է համակարգչային շարվածքի 26 էջ:

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

### ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այն հիմնական ինստիտուտը, որը ապահովում է մարդկային կապիտալի վերարտադրությունը, եղել է և մնում է ընտանիքը: Ընտանիքի դերը մնում է առաջնայինը, հիմնականը՝ համեմատած այն բոլոր ինստիտուտների հետ, որոնք մասնակցում են մարդկային կապիտալի ստեղծմանը: Ընտանիքն է ձևավորում անհատի զարգացումը նրա բոլոր դրսևորումների (ֆիզիկական, ինտելեկտուալ, բարոյական, հոգևոր) ամբողջությունում և հիմք է ստեղծում մարդուն ձևավորող մյուս ինստիտուտների գործունեության համար: Ընտանիքը, հիմնական մշակութային արժեքները, կոդերը և մեխանիզմները փոխանցելով սերնդեսերունդ՝ իրականացնում է հասարակական կարևորագույն ֆունկցիան: Սոցիոլոգները պնդում են, որ հասարակությունում ընդունված նորմերի ընկալումը, ինչպես նաև՝ հասարակական կարևոր գործունեության ու աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է հենց ընտանիքում: Եվ այստեղ են դրվում անհատի որոշակի ռասսայի, դավանանքի, դասի պատկանելիության գիտակցման հիմքերը:

Այսպիսով՝ ընտանիքը ոչ միայն ստեղծում է աշխատուժ, այլև մարդու՝ որպես հասարակության անդամ: Դրա հետ մեկտեղ ընտանիքը խթան է հանդիսանում հասարակության պահպանման համար՝ իրեն բնորոշ արժեքային համակարգերի և սովորույթների հետ մեկտեղ, որի շնորհիվ տվյալ հասարակությունը կարողանում է հարմարվել արտաքին միջավայրի փոփոխություններին՝ միաժամանակ պահպանելով և զարգացնելով սեփական անհատականությունը:

#### **Ա. Ժամանակակից ընտանիքներ**

Հասարակության զարգացման ամեն մի նոր փուլում, երբ տեղի է ունենում արժեքների վերազնահատում, առաջանում է հետաքրքրություն ընտանիքի կազմավորման և գործունեության խնդիրների նկատմամբ: Ժամանակակից ընտանիքը խիստ ուշադրության առարկա է գիտության տարբեր ճյուղերի համար: Շատ խնդիրներ ընտանիքի սոցիալ-հոգեբանական և սոցիոլոգիական հիմնադրությունների ու մոտեցումների ուսումնասիրման սահմանագծում են:

Հետազոտման ենթակա ընտանեկան կարևորագույն խնդիրներից մեկն ընտանիքում դերերի խնդիրն է: Ընտանիքում դերային հարաբերությունների փոխակերպումը ժամանակակից ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների նույնքան կարևոր կողմն է:

Ժամանակակից ընտանիքում առկա է ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմերի անորոշություն, ինչն ընտանիքի առջև մի շարք սոցիալ-հոգեբանական խնդիրներ է դնում: Դրանցից կարևորագույնը յուրաքանչյուր ընտանիքում դերային փոխհարաբերության ձևի ընտրության խնդիրն է և ընտանիքում դերային վարքի տարբեր կողմերին ընտանիքի անդամների վերաբերմունքի ձևավորումը: Մասնավորապես խոսքը վերաբերում է երիտասարդ ամուսինների մեկմեկու հարմարվելուն և ընտանեկան ոճի մշակմանը: Իսկ գործընթացը սերտորեն կապված է ամուսինների ներանձնային հարաբերությունների և նրանց պատրաստվածության հետ:

Ներկա ժամանակներում ամուսինների ներանձնային հարաբերությունների որակն առաջին հերթին որոշվում է նրանով, թե ինչպես են այն ընկալում ամուսինները, որքանով են նրանք այդ հարաբերությունները համարում հաջողված: Սակայն այսօր էլ թերուսումնասիրված է մնում այն հարցը, թե ինչպես են երիտասարդ մարդիկ ընկալում իրենց ներանձնային հարաբերությունները:

Քանի որ ընտանիքը միշտ կարևորագույն գործոն է հանդիսացել մեր ազգի պահպանման և զարգացման համար, մենք պետք է շարունակենք պահպանել ընտանիքի դերը հասարակական կյանքում և դրա վրա հիմնվելով՝ կարողանանք ձևավորել առողջ հասարակություն և ուժեղ պետություն: Այսինքն՝ իմ կարծիքով, որպեսզի ունենանք հզոր և զարգացած պետություն, պետք է հիմնվել մեր արժեքների վրա, որոնք արտացոլվում են հայկական ընտանիքում: Դրա համար անհրաժեշտ է պետական լուրջ քաղաքականություն իրականացնել նոր սերնդի մեջ ընտանիքի կարևորությունը արմատացնելու ուղղությամբ և, ինչ խոսք, յուրաքանչյուրս, գիտակցելով այդ, պետք է մեր ներդրումն ունենանք այդ գործընթացում: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն նրան, որ անհրաժեշտ է ապահովել նորաստեղծ ընտանիքների թվի աճ, այլ այն, որ, որպեսզի ունենանք առողջ հասարակություն

պետք է ունենալ ամուր ընտանիքներ: Չէ՞ որ մեզ մոտ անհատի ձևավորման գործում մեծ է ընտանիքի դերը, հետևաբար, որքան ընտանիքում տիրի առողջ մթնոլորտ, այդքան այդ ավելի կնպաստի, որպեսզի ընտանիքում ձևավորվի առողջ սերունդ, և կունենանք առողջ ու զարգացած հասարակություն: Ինչ խոսք, այս հարցում մեծ է նաև նյութական ապահովվածության խնդիրը: Որքան ավելի քիչ լինեն անապահով ընտանիքների թիվը մեր հասարակությունում, այդքան այն կարևոր նախապայման կհանդիսանա կրթված և զարգացած սերունդ ձևավորելու համար:

### **Բ. Ընտանիքի զարգացման միտումները և փուլերը**

Ընտանիքը, լինելով սոցիալական ինստիտուտ , անընդհատ ենթարկվում է հասարակության ազդեցություններին: Ընտանիքի փոփոխությունների օրինաչափությունները գուցահեռ են հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, այդ պատճառով ընտանիքի ներքին վիճակը և նրա զարգացման միտումները հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն էական փոփոխությունները , որոնք տեղի են ունեցել 20-րդ դարի ընթացում: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն , որ գոյություն ունի ընտանիքի էվոյուցիա, որը պարմանավորված է կոնկրետ ընտանիքի ներքին օրինաչափություններով: Ներկայումս հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները հետևյալն են՝ արտադրական գործընթացների բարդացում, տեխնիկական զարգացում ,արդյունաբերականացում և այլն : Վերջիններս հանգեցրել են անձնային ազատության աճին,կանանց և երեխաների էմանսիպցիային,սոցիալականացման միջոցների բարդացմանը և այլն :Ընդհանուր առմամբ՝ Կոնը այս փոփոխություններն անվանում է անհատականության արժեքի աճ : Բնակչության շրջանում հոգեբանական առումով դա արտացոլվել է ինքնագիտակցության, ինքնուրույնության աճի մեջ: Ընտանիքի զարգացման միտումները հասկանալու համար անհրաժեշտ է ամբողջ ընտանեկան զարգացումը բաժանել որոշակի շրջանների .

1. Մինչամուսնական փուլ
2. Ամուսնական փուլ
3. Քայքայման փուլ

*Մինչամուսնական փուլ* : Ամուսնությունն արդեն չի դիտարկվում որպես կյանքն ապրելու միակ ճիշտ ձև:Դադարստորվում է մինչամուսնական փուլի 3 խոշոր ոլորտներում կատարված փոփոխությունների մեջ`

- Զուգընկերոջը ընտրության գործընթացում,
- Ամուսնությանն կատարվել էրաբերմունքի մեջ,
- Սեռադերային վարքի առաջնային համակարգի մեջ:

Փոխվել է զուգընկերոջ ընտրական գործընթացը :Մինչև 19-րդ դարի 2-րդ կեսը Հայաստանում գործել է միջնորդությամբ ամուսնությունը :Միջնորդը հատուկ անձ էր, որն օժտված էր անձնային որոշակի առանձնահատկություններով :Ամուսնության անպայման պայման էր հոր համաձայնությունը : Ամուսնություններն ըստ երիտասարդների համաձայնության խիստ հազվադեպ էին : Ամուսնության համար առաջին տեղում էին ընտանեկան շահերը` տնտեսական ,կենցաղային ,հեղինակային և այլն:20-րդ դարի 2-րդ կեսից գրեթե ամենուր փոխվում է մինչամուսնական փուլի ընթացքը:Առաջանում է մինչամուսնական երիտասարդական շփում: Որպես կանոն` այն տեղի է ունենում միևնույն սոցիալական շերտի ներսում:Շփման միակ նպատակը ամուսնությունն է : Երիտասարդները կարող են իրենք իրենց հետագա ճակատագրի մասին որոշումներ կայացնել և այդ մասին տեղյակ պահել ծնողներին:Տնտեսական պատճառները մղվում են 2-րդ պլան, սակայն ծնողների համաձայնությունը նույնպես անհրաժեշտ է:20-րդ դարի երկրորդ կեսին երիտասարդական շփման շրջանները լայնանում են: Առաջին հերթին այն դառնում է բազմազան` ըստ մասնակիցների կազմի , այսինքն` երիտասարդները կարող են տարբերվել ըստ սոցիալական, ազգային և կրթական ցուցանիշների:Երկրորդ հերթին` շփումը արդեն չի սահմանափակվում տարածությամբ, երրորդ հերթին` փոխվում է երիտասարդական շփման գործառույթը. շփման միակ նպատակը ամուսնությունը չէ, կարևորություն է տրվում միայն փոխհարաբերություններին:Ազատության այս աճը իհարկե ընտանիքի զարգացման առումով դրական միտում է, չնայած լրիվ անկախություն ծնողների և հասարակության կարծիքից հնարավոր չէ:Մինչամուսնական փուլի հիմնական ձեռքբերումը անհատական ազատության և ինքնուրույնության աճն է :



**Ամուսնական փուլ:** Ամուսնական փուլի փոփոխությունները վերաբերում են ինչպես կառուցվածքին, այնպես էլ գործառույթներին: Այս շրջանի էական փոփոխություններն են՝

1. Ավանդական հայրիշխանական բազմասերնդային ընտանիքը իր տեղն է զիջում միջուկային /նուկլեալ/ ընտանիքին:
2. Ընտանիքներում փոխվում է երեխաների թիվը /1-2 երեխա/ :
3. Զարգանում է կանանց և երեխաների էմանսիպացիան:

**Ոչ լրիվ ընտանիքներ:** Հասարակական-տնտեսական փոփոխությունները, դեմոգրաֆիկական խնդիրները, կանանց էմանսիպացիան (և այլն) հանգեցնում են ոչ լրիվ ընտանիքների թվի աճին: Ոչ լրիվ ընտանիք ենք անվանում այն ընտանիքը, 7 որտեղ ծնողներից մեկը ֆիզիկապես գոյություն չունի կամ՝ միայնակ մայրերի ընտանիքներին: Զարգացման միտումները թելադրում են, որ ժամանակի ընթացքում մենք կունենանք ընտանիքներ, որտեղ կլինեն խորթ ծնողներ, որդեգրված երեխաներ և այլն: Այս բոլորը ենթադրում է բարդ հոգեբանական փոփոխություններ:

**Ընտանիքի քայքայման փուլ:** Մինչև 20-րդ դարի կեսերը գրեթե ամենուրեք ամուսնալուծությունը կամ արգելված էր, կամ բացառիկ երևութ: 20-րդ դարից զարգացած երկրներում այն ընդունվեց օրենքով: Նախկինում ամուսնալուծվող անձը հայտնվում էր կարծես թե մարզինալ վիճակում. նրան չէր ընդունում հասարակությունը: Ներկայումս հասարակությունը արգելքներ չի դնում, բայց դրանց թիվը օրեցօր աճում է:

#### **Գ. Ընտանիքի ավանդական և ժամանակակից գործառույթները**

**Ընտանիքի ավանդական գործառույթներն են՝**

1. Վերարտադրողական, այսինքն՝ սերնդի շարունակության ապահովման գործառույթը:
2. Տնտեսական, որի իրականացումը նախկինում հիմնականում ապահովում էր տղամարդը, իսկ ներկայումս այն բաշխվում է ընտանիքի տարբեր անդամների միջև, այն ապահովում է ընտանիքի նյութական բարեկեցությունը:

3. Դաստիարակչական, որը ենթադրում է սեփական փորձի, արժեքների, վարքի ձևերի փոխանցում սերնդեսերունդ:

4. Ազատ ժամանակի կազմակերպման, այսինքն՝ ընտանիքի բոլոր անդամների, հատկապես երեխաների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպում:

*Ընտանիքի ժամանակակից գործառույթներն են՝*

1. *Ռեկրեատիվ գործառույթ:* Այնորոշ չափով մասն է ազատ ժամանակի կազմակերպման գործառույթին, բայց այս դեպքում շեշտը դրվում է երեխայի հինքնուրույնության, ազատ կողմնորոշման, ազատ ընտրության վրա:

2. *Հոգեթերապևտիկ գործառույթ:* Այս գործառույթը կարելի է համեմատել հոգեթերապևտիկ սեանսների հետ: Վերջիններիս դեպքում որպես հոգեթերապևտիկ հանդես է գալիս կոնկրետ մասնագետը: Ընտանիքի դեպքում որպես հոգեթերապևտիկ հանդես է գալիս ընտանիքը կամ ընտանիքի կոնկրետ անդամը:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

### ԿՈՆՖԼԻԿՏ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գոյություն ունեն կոնֆլիկտ հասկացության տարբեր մեկնաբանություններ:

Կոնֆլիկտ բառը ծագել է լատիներեն *conflictus*(բախում) բառից և կարելի է բնութագրել որպես մարդկանց շահերի, նպատակների, արժեքների ընկալման տարբերություններով պայմանավորված անհամաձայնություն ու համապատասխան հարաբերությունների, գործողությունների դրսևորում:

Կոնֆլիկտին նախորդում է կոնֆլիկտային իրավիճակը, որը բաղկացած է կոնֆլիկտի կողմերից և կոնֆլիկտի օբյեկտից, այսինքն՝ անհամաձայնության պատճառից:

Մասնագիտական գրականության մեջ բավական տարածված է այն կարծիքը, որ կոնֆլիկտները բացասական դեր են խաղում կազմակերպության, նրա նպատակների իրականացման գործում:

Ժամանակակից տեսությունները կոնֆլիկտների խնդրին ցուցաբերում են այլ մոտեցում. կոնֆլիկտները կամակերպությունում բաժանում են երկու տեսակի՝ դիսֆունկցիոնալ /ոչ կառուցողական/ և ֆունկցիոնալ /կառուցողական/:

Սակայն շատ դեպքերում կոնֆլիկտներն ունենում են ֆունկցիոնալ /կառուցողական/ բնույթ: Այս դեպքում կոնֆլիկտների զարգացումն ուղեկցվում է տեղեկատվության առավել ակտիվ փոխանակմամբ, տարբեր դիրքորոշումների համաձայնեցվածությամբ, փոխադարձաբար միմյանց հասկանալու ցանկությամբ: Տարբեր կարծիքների, դիրքորոշումների քննարկման հետևանքով է, որ ծնվում է նոր մոտեցումը խնդրին, գտնվում լուծման առավել արդյունավետ եղանակը: Բնարկե այստեղ խիստ կարևոր է ղեկավարի դերը, որը պետք է կարողանա վերահսկել կոնֆլիկտային իրավիճակը և կառավարել դրա զարգացումը:

Կոնֆլիկտների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է պարզել կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները, ձևերը, զարգացման ընթացքը և, իհարկե, տիրապետել դրանց կառավարման մեթոդներին:

Կազմակերպությունում կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառներն են սահմափակ ռեսուրսները խնդիրների փոխկապակցվածությունը, նպատակների, հայացքների, արժեքների ընկալման համոզմունքների տարբերությունները, կազմակերպությունում կոմունիկացիաների անբավարար մակարդակը և զգայական անընդունելիությունը:

Կոնֆլիկտների առաջացման հնարավորությունը մշտապես առկա է այնպիսի իրավիճակներում, երբ կազմակերպության որևէ ստորաբաժանման կամ աշխատողի աշխատանքը կախված է այլ ստորաբաժանման կամ աշխատողի աշխատանքից: Օրինակ, արտադրական ստորաբաժանման ղեկավարը իր ենթակաների ցածր արտադրողականությունը կարող է բացատրել նորոգման ծառայության անորակ կամ դանդաղ աշխատանքով:

Կոնֆլիկտների առաջացման պատճառ կարող են հանդիսանալ նաև պատկերացումների, հայացքների, համոզմունքների, արժեքների ընկալման տարբերությունները: Շատ տարածված պատճառ է, երբ նույն խնդրի լուծման տարբեր եղանակներ են առաջարկվում կազմակերպության տարբեր ստորաբաժանումների կողմից: Կոնֆլիկտ կարող է առաջանալ տվյալ իրավիճակում ղեկավարման ոճի սխալ ընտրության ու կիրառման դեպքում, երբ հաշվի չեն առնվում աշխատողի համոզմունքները, արժեքների ընկալումը:

Կոնֆլիկտները կարող են լինել զգացմունքային, երբ կողմերի մեջ միմյանց հանդեպ կա զգայական, հուզական անընդունելիություն: Մարդիկ կարող են շրջապատում կոնֆլիկտածին իրավիճակ ստեղծել իրենց վարքով, ագրեսիվությամբ վիճելու հակվածությամբ, դիմացինի նկատմամբ անհարգալից վերաբերմունքով և այլն:

Հետաքրքիր է այն փաստը, որ կոնֆլիկտային կողմեր կարող են հաղես գալ նաև ընտանեկան միջավայրում ապրող ցանկացած անհատ: Չէ՞ որ ընտանիքը ևս խումբ է, հասարակության մի մասը:

Ըստերևոյթինչկանընտանիքներ, որոնցումչլինենվեճերուտարաձայնություններ: Վեճինույնիսկմեկեզակիդեպքըերեխաներինանհանգսություն է ներշնչում: Սակայնայնչատավելիվատհետևանքներիկարող է և քերել, եթեձնողներըչկարողանանվերականգնելընտանեկանհարաբերություններիհարմոնի

ան, գլուխհանելամենօրյադժվարություններից, միմյանցօգնելուաջակցել, և եթեգործըհասնիխորկոնֆլիկտի

(ըստորումպատճառներնայստեղկարևորչեն):Այսդեպքումարդեն

«Տուժումենմիշտերեխաները» արտահայտությունըտեղիհունձիշտկլինի:

Կոնֆլիկտինկատամբպատասխանռեակցիայիուժուխորությունըկախվածերեխայի տարիքից, փորձից, որստացել է իրընտանիքում, կյանքում, խառնվածքից, բնավորությունից, դաստիարակությունից, զգայունությունից և այլն:

Փոքրտարիքումերեխաներն,օրինակ, այնքանխորըհուզականապրումներենունենում՝ վախ, սարսափ, տառապանք, որնույնիսկ ի վիճակիչենլինումդիմելբանականությանպաշտպանականթույլմեխանիզմներիօգնությամբ: Նույնիսկեթեերեխաներըշատփոքրեն, նրանքմիննույն է զգումենձնողներիհարաբերություններիկոնֆլիկտայինվիճակը:

Նրանցհամարընտանեկանհարաբերություններիհարմոնիանունինույննշանակությունը, ինչչուրըձկանհամար, երեխաներըչենկարողազատ «լողալ», եթեընտանիքումտիրում է զրգովածմթնոլորտ: Նկատվել է, որարդեննախադարձականտարիքիերեխաներենբավականինիմաստավորվածռեակցիատալիսձնողներիվեճերինունրբորենզգումենդրանք:

Նրանցհամարարտաքուստաննշանբառերիփոխանակությունըձնողներիմիջևունիմենձ նշանակություն և ձնողներըդահասկանումենմիայնայնժամանակ, երբերեխաներըիրենցխնդրումենհաշտվելմիմյանցհետ:

Երեխաներըշատարագզգումեն,

երբձնողներիհարաբերություններումինչ-որբանփոխվում է և փորձումգլուխհանելայդիակասությունիցյուրովի:

Նրանքտարբերձներովփորձումենհարմարվելիարաբերություններինորհամակարգին: Լինումենդեպքեր, երբերեխաներըմեկմորկողմեննանցնում, մեկ՝ հոր, քանիորուզումեներկուսիհետելընկերությունանել: Այդպիսիվարքըկարող է երեխայիմեջձևավորելեսասիրությունուշողորթություն, երեխանարագսովորում է կոնֆլիկտիցշահբաղել: Դատեղի է ունենումհատկապես, եթեձնողներիցմեկըկամերկուսնելբողոքումեներեխային, փորձումնրան «զրավել» նվերներովկամայլմիջոցներով:

Ինչպես ասացինք, ընտանեկան կոնֆլիկտի նկատմամբ երեխայի ռեակցիան տարբեր է՝ կախված նրա տարիքից, սակայն ինչպիսին էլ այն լինի, մինն ույն է, այդպիսի մանկական տպավորությունները իմ քեն ստեղծում անձի դիսհարմոնիկ զարգացման համար: Երեխան, որը մինչև ծնողների կոնֆլիկտը, որպես կանոն, ակտիվորեն շփվում է նրանց հետ, հանկարծ իր համար անսպասելիորեն հայտնվում է նրանց հետաքրքրությունների սահմանից դուրս, քանի որ այժմ ծնողները գաղվում են իրենց սեփական պրոբլեմներ ի լուծմամբ: Լքված լինելու վախը և ուշադրության պահանջը բերում են նրան, որ երեխան «ընտրում է» ուշադրությունն իր վրա գրավելու որևէ եղանակ՝ գիշերամիզություն, ագրեսիվ վարք, երբեմն նույնիսկ կտրուկ միջոցներ՝ տանից փախչելու փորձեր և այլն: Մեծահասակները պետք է հաշվառեն, որ երեխայի բնավորության ագրեսիվ գծերը, որի բնօրինակը քանքան ադատում են, երեխայի՝ ներքին ինքնապաշտպանական մեխանիզմի աշխատանքի արդյունք են: Եվ նրանց այն թեորիան, թե իբր երեխան պետք է սովորի, որ կյանքը միշտ հեշտուխաղաղ է, և նա պետք է միշտ պատրաստ լինի դժվարություններին, այսդեպ քում արդեն չի գործում: Եվ եթե նույնիսկ երեխայի հոգեկան ու ֆիզիկական այս փոփոխությունները չեն ապացուցում այդ տեսակետի սխալությունը, ապա բերենք այլ փաստարկ՝ չէ՞ որ նորածիններն ակրում մտեղենով, որպեսզի անսովորի մեծահասակի սննդին, և կամ երեխային չեն գցում ջրի մեջ, որն անքնուրույն լողալ սովորի, մինչ այդ պետք է բավականին ծավալուն և ախապատրաստական աշխատանք: Իհարկե երեխան պետք է սովորի դժվարությունների հաղթահարել, բայց նրա առջև պետք է դնել այնպիսի սննդի բնույթ, որոնք նա ի վիճակի է լուծել, ելնելով իր ուժերից և համապատասխան իր տարիքի: Եվ վերջապես ծնողական ընտանիքը այն օրինակն է, որի հիման վրա հետագայում երեխան կառուցում է իր սեփականը: Եվ երիտասարդները, որոնք վերցրել են ծնողներից վարքի բացասական գծեր, ավելի շատ են դժվարությունների հանդիպում, նրանց ընտանեկան կյանքը սկսվում է նրանից, որ նրանք ստիպված են լինում վերադաստիարակվել, մինչև ընտանեկան կյանքի արվեստը: Վերադաստիարակությունը լրացուցիչ ուժեր է պահանջում թե՛ իրենցից, թե՛ շրջապատից:

Գրեթե բոլոր ծնողներն էլ ուզում են իրենց երեխաներին

«լավ նախապատրաստել կյանքին», սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները, որոնք սկսած են եղել ծնողների վեճերին,

անբարենպաստ ստարտ են ստանում: Կոնֆլիկտային վիճակում լինելով՝

ծնողներն իրենց իսկ համարել պրոբլեմներ են ստեղծում երեխայի հետագա դաստարակության գործում: Տասներեքամյա աղջնակը, որը տեսել է, թե ինչպես են մորը նսեմացնում, հետագայում ոչ բոլոր դեպքերում կենթարկվի մոր ասածներին: Մայրը

(ինչպես նաև հայրը) կորցրի իրենց հեղինակությունը դաստերաչքերում:

Ծնողների վեճը կարող է բերել նրան, որ երեխան անցնի նրակողմը, ու մձիշտ կգտնի և մյուսին կատմամբ տհաճությունը կամ երբեմն նույնիսկ ատելությունը կարող են հարթվել միայն (եթե իհարկե դա հնարավոր է) երբ երեխան կմեծանա<sup>1</sup>:

Երեխաների մոտ ներոզների ու վախերի ուսումնասիրությամբ զբաղվող բազմաթիվ գիտնականներ այդ թվում նաև Ա. Ի. Չախարովը, նույնպես իր կարծիքն է հայտնում այդ հարցի շուրջ: Կոնֆլիկտը մարդու մոտ կարող է առաջ բերել դիստրեսի տիպի հաստատուն, ներքին հուզական լարվածության վիճակ, որն ազդում է օրգանիզմի վրա՝ թուլացնելով բիոտոնուսը, իջեցնելով ռեակտիվությունը, հոգեկան միասնականության զգացումը: Ավելի հաճախ հանդիպում է ներոտիկ, սուբյեկտիվ կոնֆլիկտը, որը պայմանավորվում է անձի ներոտիկ կառույցով և հարաբերությունների համակարգում դիսպոզիցիայով: Ծնողների մոտ դա հաճախ պայմանավորված է նրանով, որ ամուսնանալիս նրանք ունեն ամուսնու որոշակի իդեալական պատկեր: Ամուսնական կյանքի ընթացքում՝ ճգնաժամային պահերին (ծնողներից հեռացում, նրանց միջամտությունը ամուսինների կյանքին, երեխայի ծնունդը, հիվանդությունները և այլն) ամուսնու մոտ «մոր պատկերը» և կնոջ մոտ «հոր պատկերը» կարող են, խիստ հակասելով իրականությանը, բերել լարվածության ու բախումների, դրանք հիմնականում կապված են ընտանիքում և երեխաների դաստիարակության գործում դոմինանտելու հետ:

---

<sup>1</sup>Учебное пособие для вузов (под ред. Сухова А.Н., Деркача А.А.). Серия: Высшее образование. 2001 г. 600 стр.

Ամենից հաճախ ամուսնալուծություններ հանդիպում են երեխայի կյանքի առաջին տարիներին: Դա կապված է նրա հետ, որ հայրը չի կարողանում դիմանալ այն բանին, որ մայրը անվերապահորեն իր ուշադրության հիմնական ծավալը տեղափոխում է երեխայի վրա: Աֆեկտիվ, ցավագին ու խանդոտ ռեակցիա տալով դրան՝ հայրն ինքն իրեն ընկալում է որպես «երրորդ ավելորդ» և հեռանում (հիմնականում վերադառնում իր մոր մոտ) այնտեղ, ուր հիմնականում լրացնում է ուշադրության ու սիրո այն պակասը, որի կարիքն ունի (իր կարծիքով):

Երբեմն ամուսինները, միմյանց վրա պրոյեկտելով իդեալականացված սեփական գծերը, առանց գիտակցելու դիմացինին ընկալում են որպես իր «նմանակ»՝ պահանջում միակողմանի կարեկցանք, ըմբռնում, սեր, և երբ այդ պահանջները չեն համապատասխանում ամուսնու իրական բնավորությանը՝ առաջացնելով անբավարարվածություն, ձևավորվում է հաճախ երկար ժամանակ արտաքինապես չդրսևորվող կոնֆլիկտ: Այս դեպքում աֆեկտիվորեն երեխայի վրա են փոխանցվում ամուսինների չիրականացված սպասումները, և երեխան ստիպված է լինում կատարել հակասող դերեր և ֆունկցիաներ, որոնք չեն համապատասխանում իր ադապտացիոն հնարավորություններին: Իր վրա կենտրոնացնելով ծնողների հուզական լարվածությունը՝ երեխան միաժամանակ ուժեղացնում է նրանց չդրսևորված, լատենտ կոնֆլիկտը, որն իր ամբողջ ուժով արտահայտվում է երեխայի դաստիարակության ոլորտում՝ ծնողների՝ վերաբերմունքային հակադիր տակտիկաների ձևով: Իրենց տարձայնություններից և անձնային առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ ծնողներն էլ չեն կարողանում ժամանակին ու համաձայնեցված հարմարվել երեխային, որը կարիք ունի անհատական, հուզական գրթասիրտ, համբերետար և վստահող վերաբերմունքի: Որպես հետևանք՝ երեխայի մոտ առաջ են գալիս հուզական խանգարումներ, որոնք առաջացնում են որոշակի խոչընդոտներ ծնողների հետ հարաբերություններում հետագա հարմարման համար: Դա էլ իր հերթին ծնողների մոտ առաջացնում է պատասխան աֆեկտիվ ռեակցիան, և ստեղծվում է ընտանեկան հարաբերությունների խանգարումների շղթա<sup>2</sup>:

---

<sup>2</sup><http://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D0%BE%D0%BD%D1%84%D0%BB%D0%B8%D0%BA%D1%82>



Հաջորդ, ոչ պակաս կարևոր, գործոնը, որը կարող է երեխայի մոտ առաջացնել աֆեկտիվ ռեակցիա, դա ծնողների կողմից առաջ քաշվող պահանջների անհամապատասխանությունն է իրենց իսկ վարքին: Դիտարկենք մի քանի դեպք՝ երբ հուզականորեն ոչ հաստատուն և եսասեր ծնողները իրենք են հիստերիայի տեսարաններ դրսևորում երեխայի կողմից իրենց քմահաճույքները չբավարարելու դեպքում և միաժամանակ երեխայից պահանջում են հնազանդություն և չափավոր ցանկություններ, երբ նրանք անընդհատ երեխային վախեցնում են իրենց պահանջները չկատարելու արդյունքներով և միաժամանակ ինքնավստահություն են սպասում, երբ ծնողները ամենուր ուշանում են և միաժամանակ երեխայից պահանջում օրվա ռեժիմի պեղանտիկ կատարում, երբ մայրը բողոքում է երեխայի անզուսպ լինելուց և անընդհատ ընդհատում բժշկին, երբ ծնողները երեխայի խնդրանքների համար «խուլ» են, բայց անհամբեր են երեխայի համառության նկատմամբ, և այլն: Բոլոր այս դեպքերում ծնողները չեն նկատում իրենց այն առանձնահատկությունները, որոնց դրսևորումներին երեխայի մոտ տալիս են աֆեկտիվ պատասխան:

Պետք է նշել նաև այն դեպքերը, երբ ծնողների գրգռվածությունը, լարվածությունը իր արտաքին դրսևորումը չի գտնում և բերում է երեխայի մոտ հաճախ ավելի ուժեղ ճնշվածության ու անհանգստության առաջացման, քան եթե ծնողներն արտահայտենքեն բացասական, բայց որոշակիորեն իրենց զգացմունքները: Այս դեպքում հիմնական տրավմատիկ գործոնը երեխաների մոտ անորոշության և տազնապային սպասումի վիճակի զարգացումն է, որը բերում է անհանգստության դիֆուզ զգացման առաջացման: Այս վիճակի պաթոգենությունը ուժեղանում է, եթե երեխաներին արգելում են բացասական հույզերի կամ զգացմունքների ցանկացած դրսևորում: Առաջանում է կտրուկ կոնտրաստ մանկական անմիջականության և ծնողական մտահոգվածությանմիջև, երեխաները չեն կարող բողոքել նույնիսկ իրենց ծնողներին՝ մտածելով, որ իրենց սխալ կհասկանան, կնախատեն կամ կպատժեն:

Ընտանեկան շատ հարցեր շատ ավելի հեշտ են լուծվում, եթե ծնողների միջև ընկերական հարաբերություններ են, որոնք պայմանավորում են նրանց շփումը միմյանց և երեխաների հետ: Ամեն դեպքում երբ նկատում եք, որ զրույցը կարող է

վերածվել վեճի, փորձեք այն ընդհատել և հետաձգել ավելի հարմար պահի, երբ երեխաները ներկա չեն լինի: Այդ դեպքում և՛ երեխաները զերծ կմնան անհանգստությունից և դուք ժամանակ կունենաք մտածելու և վերանայելու ձեր տեսակետները:

Այն ամենը, ինչ ասվեց, երեխայի վրա ընտանեկան, կոնֆլիկտի ազդեցության մասին, վերաբերում է նաև կոնֆլիկտի ավելի բարդ ու խորը ձևին՝ ամուսնալուծությանը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում ծնողները չեն ուզում զիջել հանուն ընտանիքի պահպանման: Դրա հետևանքով ծնողներն ավելի ու ավելի դաժանորեն ու անպատասխանատու են վիճում, և հաճախ միայն սեփական մեղքի զգացման ճնշման ու ինքն իր աչքին արդարանալու համար: Այդպիսի կոնֆլիկտները երեխայի վրա էլ ավելի ավերիչ ազդեցություն են ունենում:

Նկատվել է, օրինակ, որ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ կա տենդենց իրենց մեղավոր համարել ծնողների ամուսնալուծության մեջ: Մոտ 10 տարեկան երեխաները մեղադրում են ծնողներին, կամ միայն մեկին, ում մեղավոր են գտնում իրենց անպաշտպան մնալու մեջ: Ծանր հետևանքներ չեն լինում միայն այն դեպքում, երբ ամուսնալուծությունը երեխաների կողմից ընկալվում է որպես մղձավանջից ու տառապանքից ազատվելու միջոց: Պետք է կարծել, որ ամուսինները, որոնք երեխա ունեն, պետք է փորձեն անել ամեն ինչ որպեսզի հարթեն կոնֆլիկտը: Սակայն եթե այնուամենայնիվ չի հաջողվում վերականգնել ընտանեկան անդորրն ու բարենպաստ հոգեբանական մթնոլորտը, ապա, ըստ երևույթին ամուսնալուծությունը լավագույն ելք կարելի է համարել թե՛ երեխաների և թե՛ ծնողների համար:

Երկակի հետաքրքրվածության մոդելը, եթե տեղակայելու լինենք ընտանեկան ոլորտում, կստացվի, որ ամուսիններից երկուսը պետք է չապրեն միայն սեփական հաջողությունների համար, այլ մտածեն, որ իրենց հաջողությունները կախված է իրենց երեխաների ներդաշնակ ապրելակերպից՝ բխող հենց իրենց հարաբերություններից, որքան հնարավոր է ոչ կոնֆլիկտային:

Որպես կոնֆլիկտային իրավիճակներում օպտիմալ ստրատեգիա կարելի է կիրառել կյանքի ընթացքում ձեռք բերված կոնֆլիկտակայունությունը: Դա հատուկ հոգեբանական կայունության դրսևորում է: Դիտվում է որպես սոցիալական փոխազդեցության դժվար իրավիճակներում մարդու կողմից իր վարքը արդյունավետ

կազմակերպելու, մյուս մարդկանց հետ հարաբերություններում ծագած պրոբլեմը անկոնֆլիկտ լուծելու ընդունակություն: Որպես հոգեբանական կայունության տեսակ կոնֆլիկտակայունությունը ունի իր կառուցվածքը, որը ներառում է հուզական, կամային, ճանաչողական, դրդապատճառային և հոգեշարժողական բաղադրամասերը<sup>3</sup>:

Հոգեվերլուծաբան Զիգմունդ Ֆրեյդը ստեղծել է մարդկային կոնֆլիկտաբանության առաջին կոնցեպցիաներից մեկը:

Հոգեվերլուծաբան Զիգմունդ Զրեյդը ստեղծել է մարդկային կոնֆլիկտաբանության առաջին կոնցեպցիաներից մեկը: Նա հիմնականում զբաղվել է միջանձնային կոնֆլիկտներով և ցույց տվել միջանձնային հարաբերությունների վատթարացման պատճառների փնտրման անհրաժեշտությունը անգիտակցական ոլորտում: Աղլերը միկրոմիջավայրի հետ անձի կոնֆլիկտի բովանդակությունը տեսնում էր անհատի փորձերում, երբ նա փորձում էր ձերբազատվել անլիարժեքության զգացումից և դոմինանտությունից մեկը մյուսի նկատմամբ: Կ. Հորնիի կարծիքով կոնֆլիկտի պատճառ է համարվում անհատի և նրա շրջապատող միջավայրի միջև հոգատարության բացակայությունը (առաջին հերթին ծնողների):

Ըստ Ֆրոմի՝ կոնֆլիկտը առաջանում է, քանի որ մարդը չի կարողանում հասարակության մեջ ռեալիզացնել անձնական, անհատական ձգտումներին ու պահանջումները: Անգլոամերիակցի հոգեբան Մակ Դուգանը գտնում է, որ կոնֆլիկտը հասարակության մեջ անխուսափելի է, քանի որ մարդկանց բնորոշ են սոցիալական բնագոյները վախի, ինքնահամոզման ձևով, որոնք փոխանցվում են ժառանգաբար:

Այսպիսով կոնֆլիկտի առաջացման պատճառ են հանդիսանում ոչ թե միայն կենսաբանական, սոցիալական կամ դաստիարակչական գործոններն առանձին-առանձին, այլ դրանց համատեղ ազդեցությունը:

## **Ա. Կոնֆլիկտի հիմնական ձևերը և զարգացման փուլերը**

---

<sup>3</sup>Նալչաջյան «Սոցիալական հոգեբանություն»

Առավել ընդունված է կոնֆլիկտների դասակարգումը չորս հիմնական ձևերի՝ ներանձնային, միջանձնային, անձի և խմբի միջև և միջխմբային:


Ներանձնային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ ղեկավարության կողմից աշխատողին ներկայացվում են հակասական պահանջներ կամ այդ պահանջները չեն համընկնում աշխատողի անձնական պահանջմունքների և արժեքային համակարգի հետ: Ներանձնային կոնֆլիկտ կարող է առաջանալ նաև աշխատանքի գերծանրաբեռնվածության կամ թերծանրաբեռնվածության ժամանակ, երբ, որպես դրա հետևանք, աշխատողն ունենում է անբավարարվածության զգացում աշխատանքի նկատմամբ, անվստահություն իր և կազմակերպության նկատմամբ, ինչպես նաև ապրում սթրեսային իրավիճակ:

Կոնֆլիկտի ամենատարածված ձևը միջանձնայինն է: Այն պայմանավորված է ինչպես ռեսուրսների սահմանափակվածության հետևանքով կազմակերպության տարբեր ստորաբաժանումների ղեկավարների միջև ստեղծված պայքարով, երբ յուրաքանչյուր կողմ ձգտում է ստանալ առավելագույնը, այնպես էլ մարդկանց տարբեր հայացքների, խառնվածքների, արժեքների հետևանքով և ավելի շատ հոգեբանական բնույթ ունի:

Անձի և խմբի միջև կոնֆլիկտն առավել հաճախ առաջանում է այն ժամանակ, երբ անձն ունենում է այնպիսի շահեր և դիրքորոշում, որոնք տարբերվում են խմբի դիրքորոշումից: Կոնֆլիկտի այս ձևը կապված է նաև անձի և խմբի սպասելիքների տարբերության հետ: Այս ձևի կոնֆլիկտ կարող է առաջանալ խմբի և ղեկավարի միջև վերջինիս կողմից պաշտոնական պարտականություններից ելնելով, այնպիսի գործողությունների կտարման հետևանքով, որոնք անընդունելի կդիտվեն խմբի կողմից:

Միջխմբային կոնֆլիկտը կարող է լինել ոչ ձևական խմբերի և ղեկավարության միջև, երբ խմբի կողմից ղեկավարության գործողությունները անարդարացի են համարվում կազմակերպության ստորաբաժանումների միջև:

Կազմակերպությունում կոնֆլիկտի զարգացումն ունի իր հիմնական փուլերը, որն ունի հետևյալ տեսքը.



Ներկայացված գծանկարից երևում է, որ կոնֆլիկտային իրավիճակի սրության վրա իրենց անմիջական ազդեցությունն ունեն կոնֆլիկտի պատճառները, եթե դրանք մի քանիսն են, ապա մեծ է կոնֆլիկտի սրման հնարավորությունը: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, նույնիսկ կոնֆլիկտի ծագման մեծ հնարավորությունների պայմաններում էլ հնարավոր է, որ կոնֆլիկտ չառաջանա: Սովորաբար, կոնֆլիկտային իրավիճակի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ կողմերից մեկը զիջման կոնֆլիկտին մասնակցությունից իր հարավոր օգուտը ծախսումների համեմատ քիչ համարելով:

Իրականում, կոնֆլիկտային իրավիճակը մեծամասամբ իր լուծումը չի գտնում սկզբնական փուլում: Այն զարգանում է աստիճանաբար և դրսևորվում է լուրջ հակամարտության ձևով<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է կոնֆլիկտի հետևանքնորին, ապա, դրանք կարող են լինել ֆունկցիոնալ և հանգեցնել կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև դիսֆունկցիոնալ, հանգեցնելով կազմակերպության նպատակների իրականացման արդյունավետության, անձնական բավարարվածության, խմբային համագործակցության մակարդակի կտրուկ իջեցման:

Ինչ վերաբերում է արդյունավետ կառավարել կոնֆլիկտային իրավիճակը, նշանակում է ժամանակին պարզել կոնֆլիկտի առաջացման պատճառները, մակարդակը, օժանդակել կառուցողական կոնֆլիկտների ձևավորմանը, հետևել դրանց զարգացման ընթացքին, կանխել կազմակերպության համար կործանարար և վնասաբեր կոնֆլիկտների զարգացումը դրանց լուծման համար կիրառելով իրավիճակին առավել համապատասխան եղանակը:

**Բ.Բանակցությունները արտակարգ իրավիճակներում և դրանց վարման հոգեբանական առանձնահատկությունները:**

Բանակցությունբառըունի 2 նշանակություն.

1. որևէ որոշում ընդունելու, եզրակացություն կատարելու համար կողմերի միջև ընթացող քննարկում,
2. խոսակցություն:

Բանակցությունները – միաժամանակ և նեղ, և լայն, պարզ, և բարդիհասկացություններեն: Յուրաքանչյուրանգամ, երբմարդփորձում է կարծիքփոխանակելդիմացինիհետնրանցերկուսիփոխհարաբերություններըփոխելու համար, երբնրանքերկուսնելփորձումենզալորնէհամաձայնության, նրանքիրականացնումենբանակցություն: Հատկապեսդաշատկարևոր է

<sup>4</sup><http://psyfactor.org/personal/personal10-12.htm>

կոնֆլիկտային իրավիճակներում: Կոնֆլիկտը ծագում է այն ժամանակ, երբ կողմերի հետաքրքրությունները, գաղափարները տարամիտվում են այն իմաստով, որ երկուսն էլ ժամանակին չեն կարող հասնել իրենց նպատակներին, բնութագրվում է սուբյեկտի համարանձնային ոլորտում հուզական ապրումների փոփոխություններով:

Չնայած յուրաքանչյուր մարդկային հարաբերություններում կոնֆլիկտը և այնոր պես կարևորագույն բաղադրատարր միջտառկա է նրանում և պայմանավորում շատ այլ հարաբերություններ, սխալ կլինի կարծել, թե կոնֆլիկտն է պայմանավորում մարդկանց վարքը:

Այնուամենայնիվ այս հասկացությունը ունի բազմաթիվ սահմանումներ՝ կախված նրա հետազոտության բնագավառներից՝ սոցիոլոգիա, կառավարման տեսություն, հոգեբանություն:

Հաղորդակցման յուրահատկությունը բանակցությունների ընթացքում կայանում է նրանում,

որ նրանց մասնակիցները ստիպված են լինում որոշակի գործողությունների շրջանակներում անցկացնել իրենց կյանքը կամ պաշտպանել սեփական հետաքրքրությունները:

Բանակցությունները դրանք համատեղ գործունեություն է գործակցի հետ, համաձայնության հասնելու համար երկու կողմերի փոխհամաձայնեցված գործընթաց: Բանակցությունները գործունեություն է, որտեղ յուրաքանչյուր ունի իր նպատակները, հետաքրքրությունները, մտադրությունները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտրված թեման իմ կարծիքով միշտ էլ արդիական է համարվելու: Առհասարակ յուրաքանչյուր մարդու համար ընտանիքը՝ կարծում եմ առաջնային է և կարևոր: Ընտանիքի դերը մնում է առաջնային, հիմնականը համեմատած այն բոլոր ինստիտուտների հետ, որոնք մասնակցում են մարդկային կապալիտալի ստեղծմանը: Ընտանիքն է ձևավորում անհատի զարգացումը նրա բոլոր դրսևորումների (ֆիզիկական, ինտելեկտուալ, բարոյական, հոգևոր) ամբողջությունում և հիմք է ստեղծում մարդուն ձևավորող մյուս ինստիտուտների գործունեության համար: Ընտանիքում է ձևավորվում ֆունդամենտալ արժեքների կողմնորոշումը: Զարգացման , որ կողմն էլ վերցնենք, գալիս ենք այն եզրակացության ,որ այս կամ այն տարիքում կարևոր է ֆեկտիվ դեր է խաղում ընտանիքը: Ժամանակակից ընտանիքում առկա է ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմերի անորոշություն, ինչն ընտանիքի առջև մի շարք սոցիալ-հոգեբանական խնդիրներ է դնում: Այսինքն հետազոտման ենթակա ընտանեկան կարևորագույն խնդիրներից մեկն ընտանիքում դերերի խնդիրն է: Շատ կարևոր է հստակեցնել ընտանիքում դերերը :

Ընտանիքը խթան է հանդիսանում հասարակության պահպանման համար: Բոլոր ժամանակներում էլ, այդ թվում նաև մեր օրերս՝ ընտանիք հասկացությունը թեկուզ և որոշ փոփոխություններ է կրել՝ մեկ է համարվում է ամենակարևոր ինստիտուտը՝ թե պետության և թե մարդու համար :

Հասարակական-տնտեսական փոփոխությունները, դեմոգրաֆիկական խնդիրները հանգեցնում են ոչ լրիվ ընտանիքների թվի աճին: Զարգացման միտումները թելադրում են, որ ժամանակի ընթացքում մենք կունենանք ընտանիքներ, որտեղ կլինեն խորթ ծնողներ, որդեգրված երեխաներ և այլն: Այս բոլորը ենթադրում է բարդ հոգեբանական փոփոխություններ: Ժամանակակից հասարակության մեջ ամուսնալուծությունների թիվն էլ է աճել: Կարծում եմ , որ ժամանակակից հասարակության մեջ կան բազմաթիվ խնդիրներ , այդ թվում և ժամանակակից ընտանիքներում:

Ներկայումս՝ մեր օրերում , բավականին արդիական թեմա կոնֆլիկտը:



Ժամանակակից տեսությունները կոնֆլիկտի խնդրին ցուցաբերում են տարբեր մոտեցումներ , ուստի անհրաժեշտ համարեցինք անդրադառնալ խնդրին , առաջացման պայմաններին և հետևանքներին: Ուսումնասիրելով կոնֆլիկտների տեսակները , պետք է նշենք, որ հետաքրքիր էր ամուսնալուծություններին վերաբերվող կոնֆլիկտները, քանզի տեսնո ւմ ենք , թե քանի զույգեր են բաժանվում, առանց գիտակցելու, առանց սառը դատելու, և տուժվում են արդյունքում երեխաները, կամ էլ հաճախ չեն բաժանվում ծնողները ` խիճալով , փոխարենն էլ երեխաները դառնում են Տքավության նոխազ: Ցանկալի է , որ յուրաքանչյուր ոք մի փոքր մտածի ու նոր գործի, քանզի ժամանակն այնքան քիչ է երբ շտապում ես, և այնքան շատ, երբ ուշանում ես: Այսպիսով կարող եմ առանձնացնել ինձ համար մի տեսակետ, որ կոնֆլիկտի առաջացման պատճառ են հանդիսանում ոչ թե միայն կենսաբանական, սոցիալական կամ դաստիարակչական գործոններն առանձին-առանձին, այլ դրանց համատեղ ազդեցությունը:

Եվ որպես վերջաբան կմեջբերեմ Գյոթեի խոսքերից`

**Ով երկար է խորհում , միշտ լավագույն լուծում է գտնում:**

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Ա. Ա. , Հայավանդական ընտանիքի էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական ակունքները , «Հոգեբանությունը և կյանքը», հանդես, համար 2, «Չանգակ-97», Երևան 2001
2. Նալչաջյան «Սոցիալական հոգեբանություն»
3. Սեդրակ Ա. Սեդրակյան, Ընտանիքի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության ժամանակակից հիմնախնդիրները «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, համար 3-4, «Զանգակ-9», Երևան , 2008.
4. Азаров Ю. П. , Семейная педагогика , Москва , 1986.
5. Зацепин В.И. , Психология семьи .3-е издание, СПб, Москва: “Питер” , 2006
6. Учебное пособие для вузов (под ред. Сухова А.Н., Деркача А.А.). Серия: Высшее образование. 2001 г. 600 стр.
7. <http://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D0%BE%D0%BD%D1%84%D0%BB%D0%B8%D0%BA%D1%82>
8. <http://psyfactor.org/personal/personal10-12.htm>